

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) երկրորդ մասում «հասույթը» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների կոմիսիոն հիմունքներով վաճառքի դեպքում՝ վաճառված ապրանքների ընդհանուր արժեքը (ներառյալ՝ ԱԱՀ-ն)» բառերը,

2) երրորդ մասում «Սույն հոդվածի առաջին պարբերության դրույթները չեն տարածվում» բառերը փոխարինել «Սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում» բառերով,

3) երրորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը» եւ «թ» կետերով.

«ը» այն անձանց նկատմամբ, որոնց կողմից «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առևտրային գործունեության (վաճառքի) նպատակներով Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եւ չի գանձվում, իրացման գործարքներից առաջացող հարկվող շրջանառությունը հաշվետու տարվա որեւէ պահին գերազանցում է 1 մլն. դրամը:

Սույն կետով նախատեսված դեպքում անձը համարվում է ԱԱՀ վճարող 1 մլն. դրամի շեմը գերազանցելու պահից մինչեւ տվյալ օրացուցային տարվա ավարտը՝ 1 մլն. դրամը գերազանցող մասի եւ այլ հարկվող գործարքների մասով:

Սույն կետի իմաստով առևտրական գործունեության (վաճառքի) նպատակներով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանք է դիտվում այն գույքը, որը առանց օգտագործվելու (շահագործվելու) օտարվել է:

թ) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1 հոդվածով սահմանված՝ հարկման նպատակով փոխկապակցված համարվող անձանց նկատմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթեթ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» եւ
«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ
Ա. Նռանյանի եւ Ա. Մինասյանի կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

h/h	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
1.	«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 11.1 հոդվածում առաջարկվող լրացումը չի բավարարում ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Օրենքը չի տալիս «տնտեսական շահ» հասկացության սահմանումը, անհասկանալի է 3-րդ անձանցից ստացված տեղեկությունների հիմնավորվածության խնդիրը եւ դրանք հարկային մարմնի ղեկավարի կողմից որպես հիմք ընդունելը: Առաջարկվում է նախագիծը լրացնել «տնտեսական շահ» հասկացության սահմանմամբ, սահմանել 3-րդ անձանցից տեղեկությունների ստացման եւ դրանց հիմնավորվածությունը ստուգելու մեխանիզմը, ինչպես նաեւ ներկայացնել այն չափորոշիչները, որոնց հիման վրա հարկային մարմնի ղեկավարը կարող կայացնել նման որոշում:	Չի ընդունվել: 1) 3-րդ անձանցից տեղեկությունների ստացման մեխանիզմները սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, իսկ դրանց հիմնավորվածությունը ստուգելու մեխանիզմների սահմանման անհրաժեշտություն, կարծում ենք, չկա, քանի որ տեղեկությունները ներկայացնող 3-րդ անձինք հիմնականում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններ են: 2) «տնտեսական շահ» հասկացությունը եւ հարկային մարմնի ղեկավարի կողմից որոշում կայացնելու համար հիմք հանդիսացող չափորոշիչները նախագծով ամրագրելը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն, որ փորձը ցույց է տալիս, որ տնտեսավարող սուբյեկտների փոխկապակցվածության համար հիմք հանդիսացող չափանիշներն օրենսդրորեն ամրագրելը արդյունավետ չէ, քանի որ միշտ կլինեն այնպիսի դեպքեր, երբ ըստ էության փոխկապակցված տնտեսավարող սուբյեկտները օրենքում ամրագրվող չափանիշներով կարող են չհամարվել փոխկապակցված: Հետեւաբար, առավել նպատակահարմար է օրենքով չսահմանափակել տնտեսավարող սուբյեկտներին փոխկապակցված համարելու շրջանակը եւ այդ փոխկապակցվածությունը գնահատել նաեւ այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները հաստատում են անձանց՝ փոխկապակցված լինելը: